նականութեամբն միշտ յաղթած և ապրած են Հայք, սակայն այժմ հարուածն կարուկ և ծանր է, և կըտրուի Հայոց մատաղ կամ ապագայ սերնդէն սկսեալ, վասն որոյ ըստ այնմ պէտք է մեզ սպառազինուիլ և պաշտպանողական դիրք բռնել։

Միանգամայն պէտք է աշխատիլ՝ որ Հայոց մանկունք հեռու մնան օտար և վնասակար ուսմունքներէ, և երբէք չը խրկուին այնպիսի ուսումնարաններ՝ որոց մէջ կրօնն պոպրոՀէալ է, և վերջապէս ըստ գործոցն և արդեանց՝ ձեւեալ են նը պատակներն և ջանքերն, զորս կոչբերն անգամ կարող են դիտել և հասկանալ։

Այսուհետև հոգեւոր հովուաց և Վարդապետաց պարտքերն անհրաժեշտ կըպահանջեն անքուն հսկել ժողովրդեան և յաւէտ Հայ մանկանց դաստիարակութեանց վերայ, և միշտ զգուշաւոր պաշտպանութիւն նուիրել նոցա։

ՎԱՀՐԱՄ ՎԱՐԴԱՊԵՏ ՄԱՆՆՈՒՆԻ.

ԱԶԳԱՅԻՆ

ԹԵՄԱԿԱՆ ՎԵՐԱՏԵՍՈՒՉՔ.

Ներկայ ժամանակիս մէջ դաստիարակութեան կարեւորութիւն և նշանակութիւն որքան զգալի է գրեթէ ամենեցուն՝ զայն մեկնելոյ կարօտութիւն չկայ, ըստ որում ամեն. լուսաւորեալ ազգաց մէջ կենդանի ոգի եղեալ հանդիսացած՝ գրեթէ բաղմաց ջանքերն և ուշադրութիւնքն գրաւած է։

Եվ որքան անհրաժեշտ և օգտաւէտ է այս, ընդ այս քաջ խելամտելոյ համար բաւական է մի ուսումնական և մի տըգէտ անձանց մէջ բաղդատութիւն կշռել։

Բայց միայն ուսումնական և գիտնական անձինք պատրաստելն՝ բաւական չէ մի ազգի յառաջադիմութեան, զի Ֆ Բոբոյ-կան պակասո-ՐԻՆ կարող է ո՛ և իցէ անձի ուսումնականութիւնը ոչ միայն ոչընչութեան մատնել, այլ միանգամայն բազում նախատինքներ հեղուլ նորա գլխոյն, և ուսմանց դէմ ժողովրդական հակակրութիւն գոյացնել։

Ուստի ընդ մտաւորականին և բարոյականութեամբ զարգացեալ և հմտացեալ բարեկիրթ ուսումնական անձինք պատրաստելոյ համար կարեւոր են բարեկարգ և օրինաւոր ուսումնարաններ և դպրոցներ, որոց համար ևս անհրաժեշտ է անխոնջ և արթուն հսկող և հետեւող վարչութիւն և կանոնադրութիւն, որպէս զի ուսմունքն և գիտութիւնքն բարի արդիւնք և հետեւանք ծնանին ի մարդիկ։

Ըստ այսմ մեր Ազգի մէջ ևս որքան և հետզհետէ առաւել մեծ կարեւորութիւն և կարօտութիւն կզգամք դաստիարակութեան կենսական խնդրոյ առթիւ, նոյնքան ևս պարտաւոր եմք արթուն հսկողութեան և բարեկարգ վարչութեան ենթարկել, որպէս զի Հայկազն մանկունք փոխանակ օգտուելոյ և զարգանալոյ ի բարիս՝ չթունաւորվին։

Վասն որոյ Վ. Հ. Հայրապետ չբաւականացաւ ուսումնարաններ և դպրոցներ ի բաղում տեղիս հիմնել և բանալ հրամայելով և հետեւելով, և Թեմական Առաջնորդաց պարտաւորութեանց ծանրութիւնք արդելք լինելով դաստիարակութեան խնդրոյ և ուսումնարանաց և

դպրոցաց վիճակաց մեծ ուշադրութիւն նուիրելոյ, արժան դատեց ամեն Առաջնորդաց մօտ Թէմական Վերաքննութեան անուամբ ուսումնական օգնական ունենալ, որպէս զի սոքա իւրեանց բոլոր ուշադրութիւնքը և գործունէութիւնքը մի միայն ուսումնարանաց և դպրոցաց վերայ դարձնեն և զայնս բարեկարգեն, և օգտաւէտ և արդիւնաւոր դրից մէջ զարդարեն։

Եյսպիսի մի կարգադրութիւն առաւել ևս մեր Ազգի համար ամենակարևոր և շատ օգտաւէտ լինելով, անշուշտ բոլոր մերազնեայք պիտի մխիթարուին և ուրախանան. վասն զի մեր ուսումնարանք և դպրոցք կրօնական կերպարանք ունին, յորս կպատրաստուին նա և ի պէտս Հայոց Եկեղեցւոյ պաշտօնեայք։

Երդէն Երևանայ վիճակին համար Թէմական Վերաքննող նշանակուած անձն իւր պաշտօնը կշարունակէ, և անշուշտ նա՝ զի միւս վիճակք ևս ցարդ նշանակեալ կունենան Թէմ. Վերաքննողներ։

Հաւասիկ կարևոր կհամարիմք Վ. Հ. Հայրապետի՝ յանուն Մինոգի՝ այս խնդրոյ համար առաջադրած Կոնդակին և Վերատեսչաց տրուած հրահանգին պատճէնը հրատարակել ամենազրոյս մէջ ի գիտութիւն մեր սիրելի եղբարց։

«Սեպուհ և անհրաժեշտ պարտաւորութիւն է վիճակաւոր Առաջնորդաց Հայոց և Յաջորդաց՝ ըստ կանոնաց և պատուիրանաց Եկեղեցւոյ մերոյ սրբոյ՝ ընդ կարգադրութիւնս Եկեղեցեաց՝ փոյթ ունել և զբաղեկարգութենէ և զյառաջադիմութենէ թեմական ուսումնարանաց և ծխական դպրոցաց ի վիճակս իւրեանց արթուն հսկողութեամբ, զորս տրամադրէ և Կանոնադրութիւնն 1836 ամի ի 66րդ Յօդուածին։ Սակայն նշմարին զանցառութիւնք յոմանս Առաջնորդս և Յաջորդս, ուստի սակս բազմարդիւն կացուցանելոյ զուսումնարանս և զդպրոցս վիճակացն՝ առաջադրեմք Մինոգիդ սրբոյ Էջմիածնի՝ փութալ պատուիրել համայն վիճակաւոր Առաջնորդաց Ռուսաստանեայց, զի եթէ հոգք և զբաղմունք վիճակայինք չներեսցեն անձամբ զայս ամենակարևոր պաշտօն կատարել գոհացուցիչ իմն կերպիւ, յօգնականութիւն կոչեսցեն ինքեանց և փոյթ կալցեն ընտրել ոչ անագան ի հմուտ և յուսումնական Եկեղեցականաց և կարգել ի կողմանէ իւրեանց՝ Վերատեսուչս վասն իւրաքանչիւր թեմի և վիճակի. իսկ ուր ոչ դատանին արժանաւորք յեկեղեցականս, մարթ է և յաշխարհականաց կարգել Վերատեսուչ ըստ նկատողութեան իւրեանց, որք լեցին կարի արժանաւորագոյնք պաշտաման այնմիկ ուսմամբք և գիտութեամբք իւրեանց՝ հոգալով զծախս ճանապարհի նոցա և զայլս ի վիճակային արդեանց,,։

«Իսկ պարտաւորութիւնք Վերատեսչաց և օգնականացն՝ ըստ հրահանգին տրուեցելոյ ի մէջ՝ լինիցին յաճախել յայց ուսումնարանաց և դպրոցաց քաղաքաց և գիւղօրէից, և վերահասուլեալ հսկել ներքին և արտաքին կառավարութեանց և ընտրութեան դասատրոց և գիւրըմբռնելի և բարեյարմար եղանակաց դասաւանդութեանց ըստ ընդունակութեանց աշակերտաց, կարևորութեանց առարկայից՝ ըստ ներելոյ նիւթական միջոցաց իւրաքանչիւր տեղեաց և ըստ կարօտութեանց և պահանջմանց լուսաւորեալ դարուս, նա մա-

նաւանդ ջանալ ի զարգացումն բարոյական կրթութեան և Կրօնական ուսմանց դաստիարակութեան՝ և Ազգային լեզուիս գիտութեան։ Եւ ի վերջ իւրաքանչիւրամաց տացեն Վերատեսուչք զհամար գործողութեանց իւրեանց առ Առաջնորդս՝ և նոքա առաջի արասցեն Սինոդի առ ի խորհել և տնօրինել զարժանն ի բարեկարգ յարատեւութիւն և յարդիւնաւոր զարգացումն ուսումնարանաց և դպրոցաց ըստ պիտոյից ժողովրդեան ի կրթութիւն երկսեռ Հայազնեայ Մանկանց և ի պայծառութիւն Եկեղեցւոյ Հայաստանեայց ,, ։

,, Եւ ահաւասիկ յօրինեալ զհրահանգս բաղկացեալս ի քսան և երեք յօդուածոց վասն Վերատեսչաց և պարտաւորութեանց նոցին՝ ընդ սմին առաքեմք ի Սինոդդ ի փոյթ տնօրէնութիւն ,, ։

Հրահանգ վասն թեմական Վերատեսչաց

---

1. Յիւրաքանչիւր թեմի գտանիցի մի Վերատեսուչ, իբրև օգնական Առաջնորդի, վասն կառավարելոյ զուսումնական մասն դպրոցաց և ուսումնարանաց թեմի։

2. Թեմական Վերատեսուչն ստորադրի անընդմիջապէս ընդ իշխանութեամբ Առաջնորդի։

3. Առաջնորդն ընտրէ զթեմական Վերատեսուչն և առաջարկէ Վեհափառ Կաթուղիկոսին ամենայն Հայոց ի հաստատութիւն։ Նոյն կարգաւ լինի և արձակումն և պարգևատրութիւնն թեմական Վերատեսչի։

4. Թեմական վերատեսուչն ընտրի յատկապէս յուսումնականացն աւարտելոց զուսմունս իւրեանց ի բարձրագոյն և ի միջնակարգ ուսումնարանս Տէրութեան՝ և կամ յազգային թեմական Հոգևոր Դպրոցս։

5. Թեմական Վերատեսուչն ընտրի առաւելապէս ի հոգևորականաց, իսկ ի կարևոր դէպս՝ և յաշխարհականաց։

6. Ն՛անապարհաձախք թեմական Վերատեսչի մասնակարարեսցի յուսումնարանաց՝ և կամ ըստ նկատողութեան թեմականաց՝ ի վիճակային արդեանց։

7. Թեմական Վերատեսուչն ունիցի Օգնականս ըստ թուոյ Յաջորդութեանց։

8. Թեմական Վերատեսչին ստորադրին ազգային ծխական և միջնակարգ դպրոցք ըստ ուսումնական և ըստ անտեսական մասին, բաց ի թեմական Հոգևոր Դպրանոցէ, յորոյ վերայ հսկէ ինքն Առաջնորդն։

9. Թեմական Վերատեսուչն յանձին կալցի զամենայն փոյթ զներքին և զարտաքին բարեկարգութեանց և յառաջադիմութեանց Դպրոցացն ստորադրելոց իշխանութեան իւրում, նոյնպէս և զնիւթ. ապահովութեանց նոցին։

10. Թեմական Վերատեսուչն պարտի ջանալ՝ զի բացցին ծխական դպրոցք ամենայն ուրեք, զոնէ յիւրաքանչիւր գիւղս մէն մի, իսկ ի քաղաքս և ի բազմամարդ աւանս երկու և աւելի՝ ըստ թուոյ Եկեղեցեաց և ըստ չափու պիտոյից տեղւոյն։

11. Թեմական Վերատեսուչն հաստատէ և արձակէ զվարժապետս և զմանաւոր տեսուչս ծխական և միջնակարգ դպրոցաց՝ ըստ առաջարկութեան իւրոյն օգնականաց. իսկ սակս պարգևատրութեան նոցա առաջարկէ Առաջնորդին։

12. Թեմական Վերատեսուչն պարտի յոյց ելանել դպրոցաց ամբողջ վիճակին

զէթ մի անդամ ի տարւոջ, իսկ օգնականք նորա բազմիցս՝ ի մասնաւոր շրջանս իւրեանց։

13. Թեմական Վ. Երատեսուչն նկատելով անձամբ անձին զորպիսի և իցէ անկարգութիւնս ի դպրոցս թէ ըստ ուսումնական և թէ ըստ տնտեսական մասին, կամ ստանալով զտեղեկութիւնս յօգնականաց իւրոց, ի վարժապետաց և ի մասնաւոր տեսչաց, ի հոգաբարձուաց և կամ ի ծնողաց աշակերտաց, սակս ինչ ի՛նչ անկարգութեանց, փութայ բառնալ և հեռացուցանել զայնոսիկ՝ առնելով անյապաղ զարժանաւոր տնօրէնութիւնս։

14. Թեմական Վ. Երատեսուչն քննէ զամենայնգանգատս զօգնականաց, զվարժապետաց, զտեսչաց և զհոգաբարձութեանց, և առնէ զարժանաւոր տնօրէնութիւն. իսկ ի ծանրակշիռ խնդիրս առաջարկէ զայնոսիկ Առաջնորդին հանդերձ դատողութեամբ իւրով։

15. Թեմական Վ. Երատեսուչն պարտի հոգալ և պատրաստել զյիւրըմբռնելի դասագիրս և հնարել զյարմար եղանակս դասաւանդութեանց ըստ ընդունակութեանց աշակերտաց իւրաքանչիւր տեղեաց։

16. Թեմական Վ. Երատեսուչն յօրինէ զհրահանգս վասն օգնականաց իւրոց և առաջարկէ Առաջնորդին ի հաստատութիւն։

17. Թեմական Վ. Երատեսուչն զննէ և հաստատէ զհրահանգս յօրինեալս յիւրոց օգնականաց վասն դպրոցաց շրջանաց իւրեանց։

18. Թեմական Վ. Երատեսուչն զննէ ըստարեկան հաշիւս օգնականաց իւրոց։

19. Թեմական Վ. Երատեսուչն զննէ ըստարեկան հաշիւս (թէ ըստ տնտեսական մասին և թէ ըստ ուսումնական) իւրաքանչիւր դպրոցի, զորս առաջարկեն նմա վարչութիւնք դպրոցաց ի ձեռն օգնականաց նորա։

20. Թեմական Վ. Երատեսուչն կարէ զընդունել զմատեանս հոգաբարձուաց երբ և կամեսցի։

21. Թեմական Վ. Երատեսուչն դումարէ ի տարւոջ երկիցս զմանկավարժական ժողովս յօգնականաց իւրոց։

22. Թեմական Վ. Երատեսուչն յամսեանն Փետրուարի՝ առաջարկէ Առաջնորդին ըստարեկան մանրամասն հաշիւս վասն անցեալ ամի։

23. Վ. Լիճակաւոր Առաջնորդն զտարեկան հաշիւս Թեմական Վ. Երատեսչի հանդերձ իւրովք նկատողութեամբք առաջարկէ Սինոդին Ս. Էջմիածնի ի զննութիւն։

(*) Այս հրահանգ ունի ենթարկիլ փոփոխութեանց ըստ փորձառութեանցն օրտաւէտ երևելոց, և յաւելուլ կամ կարճել ի սմին զյօդուածս համաձայն պահանջից ժամանակին։

ՑՈՒՑԱԿ ՆՈՒԻՐԱՏՈՒԱՑ Ի ՆՊԱՍՏ ՇԻՆՈՒԹԵԱՆՑ ՄԱՑՐ ԱԹՈՌՈՑՍ.

(Շ-ր-ն-ի-ր-ն)։

Ի ՎԻՃԱԿԻՆ ԱՂԷՔՍԱՆԴՐԱՊՕԼՈՅ.

Հասարակութիւն Զրախլի գեղջ	13
Նոյն գիւղացի Դանիէլ քահանայ Տէր Կարապետեան	1
,, Վարդան քահ. Փահլիվանեանց	1
,, Վարդան Ցարութիւնեան	50
,, Վարդան Խաչատրեան	80
,, Յովհաննէս Կիրակոսեան	20